ԿԱՐԾԻՔ

Սարգիս Վանյայի Փահլևանյանի՝ «Ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիայի մշակման գիտատեսական հիմունքները» վերնագրով, ԺԳ.00.01 թվանիշով, «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հանրակրթական դպրոցի սովորողների տարիքային շրջաբաժանման մեջ ատենախոսը իրավացիորեն ավագ դպրոցական տարիքը համարում է նրա մարմնի համամասնական ու կանոնավոր ձևավորման, նրա բոլոր օրգանների զարգացման համար կարևորագույն տարիք: Նա այդ տարիքը բնութագրում է պատանիների ու աղջիկների սեռական հասունացման և նրա ավարտի տարիք:

Ատենախոսը իր աշխատանքային փորձով համոզված է, որ.

- **Ավագ դպրոցի սովորողների**, մասնավորապես աղջիկների ֆիզիկական պատրաստականության մակարդակը դեռ բավարար չէ: Որ
- **Բացակայում է** ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներին մասնակցելու դրդապատճառները: Որ
- **Սովորողներն աչքի չեն ընկնում** իրենց ֆիզիկական կարգավիճակը բարելավելու ձգտմամբ: Որ
- **Հակված չեն** բարձրացնելու ֆիզիկական կուլտուրայի վերաբերյալ տեղեկացվածության ու գրագիտության մակարդակը: Որ
- **Կան ֆիզիկական դաստիարակության** տեխնոլոգիայի մշակման գործում հակասություններ նրա մեթոդաբանության տեսական և կիրառական մակարդակների միջև:

Ներկայացված հակասությունների բացահայտումը ատենախոսին թույլ է տվել ձևակերպել հետազոտության հիմնախնդիրը, որն էլ պայմանավորել է ատենախոսության թեմայի ընտրությունը:

Ատենախոսը իր առջև **նպատակ** դնելով՝ **մշակել** ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիայի մշակման գիտատեսական հիմունքները և

- **ուսումնասիրելով** հետազոտվող հիմնախնդրի մշակվածության աստիճանը և մանկավարժական գրականության մեջ և գործնականում նրա նկատմամբ ժամանակակից մոտեցումները,
- **իրականացնելով** ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության տեխնոլոգիայի մշակման մեթոդաբանական և տեսական հիմքերի վերլուծությունը,
- **մշակելով** ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության՝ մարզասարքերի կիրառմամբ նոր տեխնոլոգիա և դրանք ներկայացնելով որպես հետազոտությունից և նրա նպատակից ու գիտական ենթադրությունից՝ վարկածից բխող **խնդիրներ**, ատենախոսը հիմնավորում է **հետազոտության արդիականությունը**:

Ատենախոսի կողմից հաջողությամբ ու ներդաշնակ ձևով ներկայացված **գիտական ապարատը** ի ցույց է դնում այն **գիտական նորույթը**, որը կազմում է այդքան հաջողված ու գիտականորեն հիմնավորված ատենախոսության թագն ու պսակը: Ատենախոսը

- **Տեսականորեն մշակել է** ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիայի գիտատեսական հիմունքները:
- **Իրականացրել է** ֆիզիկական դաստիարակության տեխնոլոգիան մարզասարքերի կիրառմամբ:
- **Առաջարկել է** ավագ դպրոցքում ֆիզիկական կուլտուրայի ձևավորման ևս նոր՝ առողջապահական տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս՝ մի կողմից արդյունավետ դարձնել ավագ դպրոցում սովորողների ֆիզիկական զարգացման գործընթացը, մյուս կողմից՝ խթանել սովորողների հետաքրքրությունները ու հակումները ֆիզիկական կուլտուրայի հանդեպ:
- **Ստեղծել է** ավագ դպրոցում սվորողների որովայնային մամլակի մկանային համակարգը ձևավորող և զարգացնող, տեխնոլոգիապես կատարելագործված նոր մարզասարք:

Եվ ահա թե ինչպես է ատենախոսը իր հետազոտության գիտական ապարատը՝ **նպատակն ու խնդիրները, գիտական վարկածն ու մեթոդաբանության հիմքը, մշակվածության աստիճանը, հավաստիությունն ու հիմնավորվածությունը** և որ ամենակարևորն է **գիտական նորույթը** ինչպես, ինչ սկզբունքներով, մեթոդներով, մի-

ջոցներով, ինչ ձևերով ու կառուցվածքով է հիմնավորում համապատասխան **եզրակացության գալու** նպատակով:

Ատենախոսը **գլուխների** տեսքով իր առջև դնում է **երեք կարևոր խնդիր** և որոնք արմատապես և գիտական պատշաճ մակարդակով լուծում է իր հետազոտական աշխատանքի ընթացքում: Դրանք են

- **Ֆիզիկական դաստիարակության և սպորտի միջոցով ՀՀ ազգաբնակչության ֆիզիկական և հոգեկան առողջության հիմնախնդրի մշակման և լուծման մեթոդաբանական հիմունքները:**
- **Ֆիզիկական կուլտուրայի ձևավորման տեխնոլոգիան ավագ դպրոցում:**
- **Որովայնային մամլակի մկանային համակարգի զարգացման տեխնոլոգիայի ստեղծումը և կիրառումը ֆիզիկական կուլտուրայի դասերին:**

Այս խնդիրներին ատենախոսը բացահայտում և լուծումներ է տալիս անչափ փոքր թվացող, բայց լուծումների հարցերում բանալու դեր կատարող ինքնատիպ միջոցներով: Որպես այդպիսիք մենք առանձնացնում ենք.

- **ազգաբնակչության** ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովման և երիտասարդության սոցիալական ակտիվության բարձրացման գործում ֆիզիկական դաստիարակության **դերը,**
- **մանկավարժության** մեջ տեխնոլոգիա հասկացության բովանդակության և ծավալի ընդհանրապես և ֆիզիկական կուլտուրայի ձևավորման տեխնոլոգիաների վերաբերյալ մանկավարժական տեխնոլոգիաների ֆիզիկական դաստիարակության գործընթացում ներդրման հստակեցման **խնդիրները,**
- **ավագ դպրոցի** աշակերտների որովայնային մամլակի տարածված թերզարգացածության կանխման, վերացման միջոցները և մկանների զարգացումն ապահովող տեխնոլոգիական **միջոցները:**

Հետազոտության **գիտական նորույթը** հաստատող ու հիմնավորող հարցեր, որոնք ատենախոսը **գիտական բարձր մակարդակով** և գրագետ շարադրմամբ ներկայացնում է իր 151 էջից կազմված ատենախոսության «**Ներածությունում**», **երեք գլուխներում, տաս ենթագլուխներում,** յուրաքանչյուր գլխի համար առանձնացված **եզրակացություններում և յոթ բովանդակալից կետերից և հինգ ենթակետերից կազմված եզրակացություններում:**

Ատենախոսը շարադրանքում առանձնակի շեշտադրմամբ տեղ է տալիս իր աշխատանքի իրոք **գիտականությունը հիմնավորող, վարկածը հաստատող, պաշտպանության ներկայացվող դրույթները** հավաստող հետևյալ խումբ հարցերը:

1. **Մարդկային առողջության ամրապնդման խիստ անհրաժեշտությունը,** նկատի ունենալով հատկապես

   ա) **անձնավորության** ֆիզիկական ուժը, դիմացկունությունը, աշխատունակությունը, հիվանդությունների հանդեպ դիմադրողականությունը, նրա հմտություններն ու գիտելիքները,

   բ) **անձնավորության** առողջության պահպանման նորարարական քաղաքականության բաղադրիչները՝ ուսումնական առողջարարական գործունեության անընդհատ կազմակերպումը, առողջապահական միջավայրի ստեղծումը, առողջական վիճակի մշտադիտարկումը,

   գ) **անձնավորության** առողջության վրա ազդող կենսաբանական, սոցիալ-մշակութային, էկոլոգիական **գործոնները,**

   դ) **առողջապահական** տեխնոլոգիաները և նրանց ձևավորող տեղեկատվական, հաղորդակցական, ախտորոշիչ, հարմարվողական, ռեֆլեքսիվ, ինտեգրատիվ գործառույթները:

   - հոգեբանական առողջության մոդելը:

2. **Ավագ դպրոցական տարիքի բնութագիրը** նրա բնավորության ամեժամանակակից գծերը

   ա) ինքնուրույնության ձգտումը և հասունության զգացումը,

   բ) տեսակետների, հայացքների և համոզմունքների մեջ սկզբունքայնություն հանդես բերելը,

   գ) իրեն մեծ պատկերացնելու և երևալու միտումը,

   դ) անկախության հասնելու և ինքնուրույն գործելու նպատակադրումը,

   ե) ուրիշների և հատկապես մեծերի նկատմամբ քննադատական մոտեցումը,

   զ) շրջապատի թերությունները նկատելու և վեր հանելու կարողությունները,

   է) հեղհեղուկ տրամադրությունը, մերթ ուրախ ու նախաձեռնող, մերթ տխուր ու թախծոտ լինելը,

   ը) նաև հանդգնությունը, գրգռվածությունը, համառությունը, երբեմն էլ վար-

քում հանդես եկող կոպտությունը, որոնք ատենախոսը իրավացիորեն համարում է նրանց նկատմամբ մեծերի տակտի բացակայությունը, ինքնուրույնության ոտնահարումը, անարդար վերաբերմունքը, մեծերի բացասական օրինակը, կամքի ոչ բավարար զարգացած լինելը, կուլտուրական վարքին ընտելանալու անկարողությունը:

3. **Հետազոտության մեջ իր կիրառած մանկավարժական և առողջապահական տեխնիկան ու տեխնոլոգիան**: Եվ ոչ միայն առանձնացնում է, թվում ու վերլուծում տեխնոլոգիաների տեսակները, այլև ներկայացնում է իրը, սեփականը, ընդհանրացվածը: Նա գտնում է, որ՝ «մանկավարժական տեխնոլոգիան մանկավարժության սուբյեկտների միջև փոխկապակցված ու փոխներգործող գործընթաց է, որն ապահովում է մանկավարժական արվեստի և մանկավարժական վարպետության մակարդակի բարձրացված ուսուցման ու դաստիարակության **ելակետային դրույթների՝ սկզբունքների, մեթոդների**, մեթոդական խմբերի, հնարների, եղանակների, տեղեկատվական, հաղորդակցական և ուսումնական տեխնիկական այլ **միջոցների**, աշխատանքի կազմակերպման ամենատարբեր և ինքնատիպ **ձևերի համատեղ ու գործիմաց կիրառումն է**. ուսուցման, կրթության ու դաստիարակության հիմնական նպատակի՝ անձի ձևավորման, զարգացման և սոցիալականացման գծով»:

Իր ստեղծած ու ներդրած ավագ դպրոցականի որովայնային մամլակի նշանակության հիմնավորումը և նրա զարգացման ապահովումը բովանդակալից **11 աղյուսակների, 7 գծապատկերների, 3 նկարների, 17 նկար-վարժությունների, փորձարարական-գիտական հիմնավորումների և 7 կետից ու 5 ենթակետերից կազմված եզրակացությունների միջոցով**:

Ավելացնենք նաև, որ վերը ներկայացվածը խոսում է ատենախոսության գիտական բարձր մակարդակի մասին, որ

- ատենախոսի կողմից **թեմայի ընտրությունը հիմնավորված է**, գիտական ապրատով, շարադրանքով, հետազոտությամբ: Որ
- հետազոտության **խնդիրները** համապատասխանում են ատենախոսության **նպատակին**, իսկ **եզրակացությունները՝ խնդիրներին**: Որ

- աշխատանքի **բովանդակությունը** լիուլի ներդաշնակ է ատենախոսության **թեմային:** Որ
- հետազոտության **մեթոդների** ընտրությունը ատենախոսի կողմից արդյունավետ է: Որ
- հետազոտության նպատակով առանձնացված 113 անուն գրականությունն ամբողջությամբ արտացոլված է ատենախոսության շարադրանքում: Որ
- հետազոտության կատարման բոլոր՝ չորս փուլերում ատենախոսն ապացուցեց, որ ունի ստացված տվյալները հետազոտելու և վերլուծելու և գիտական եզրակացության հանգելու կարողություն:

Ասել է, թե **աշխատանքն ինքնուրույն, համարյա ավարտուն,** իր տեսակի մեջ **ինքնատիպ** գիտական հետազոտություն է **տեսական** լուրջ արժեքով ու **գործնական** կարևոր նշանակությամբ:

Բայց ատենախոսը կարող էր նաև չվրիպել ու թույլ չտալ բացթողումներ, որոնք մենք կուզենանք ներկայացնել

1. **Ատենախոսության գիտական ապարատում խնդիրների, գիտական նորույթի, պաշտպանության ներկայացված դրույթների և եզրակացությունների** կետերի համամասնությունը պահպանված չէ, իսկ **գիտական վարկածը**, որը շատ կարևոր է, կետեր չունի և շարադրված է ընդամենը մեկ ընդարձակ նախադասությամբ:
2. **Գրականության ցանկի** 113 աղբյուրներից 38-ը (NN 7, 12, 14, 17, 19, 21, 26, 29, 30, 37, 38, 40, 41, 42, 44, 45, 46, 53, 54, 55, 56, 58, 71, 76, 79, 80, 85, 91, 95, 96, 98, 100, 102, 103, 104, 105, 106, 109) նախորդ՝ 20-րդ դարի գործեր են և դրանց փոխարեն կարելի է ավելի թարմը, այսօրվանն օգտագործել, որոնք և մանկավարժական գիտության, և ֆիզիկական դաստիարակության գծով կան համացանցում:
3. **Շարադրանքում արված 91 հղումներից 20-ը** առանց էջերի: Դա նշանակում է, որ ատենախոսը կարդալ ցանկացող չի կարող համոզվել հղումների օբյեկտիվության մեջ և ատենախոսությանը զերծ կպահի գնահատումից: Դրանք գրականության ցանկի NN 17, 44, 47, 52, 53, 54, 57, 60, 62, 72, 74, 77, 78, 79, 80, 81, 86, 103, 107, 111: Իսկ եթե ավելացնենք, որ այդ աղբյուրներից 57-ը, 60-ը, 86-

ը, 107-ը և 111-ը առանց էջերի նշման 2, 3, անգամ չորս անգամ կրկնվում են շարադրանքում պատկերը կամբողջանա:

4. **Լավ կլիներ ատենախոսը իր գործը ներկայացներ հավելվածով**, որով կլցներ աշխատանքի բաց տեղերը, որոնք, իհարկե, եթե հետազոտության մեջ կան:
5. **Տեխնիկական բնույթի վրիպումները** իհարկե ոչ լրիվ ատենախոսի մեղքով է, բայց նրա ուշադրության դեպքում դրանք էլ կարող էին չլինել:

Նշվածները չհամարելով գրախոսվող ատենախոսության գիտական արժեքն իջեցնող դիտողություններ, կարելի է համարձակ արձանագրել, որ

Սարգիս Վանյայի Փահլևանյանի՝ «Ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիայի մշակման գիտատեսական հիմունքները» վերնագրով, ԺԳ.00.01 թվանիշով, «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ աշխատանքը լիուլի համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի **7-րդ կետով թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:**

Ուստի առաջարկում ենք ատենախոսության հեղինակ **Սարգիս Վանյայի Փահլևանյանին շնորհել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան** ԺԳ.00.01. թվանիշով և «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ:

Առաջին պաշտոնական ընդդիմախոս,
ՀՀ վաստակավոր մանկավարժ, մանկավարժական
գիտությունների դոկտոր, **պրոֆեսոր**

Մնացական Մանուկյան

Պրոֆեսոր Մնացական Մանուկյանի ստորագրություն հաստատում եմ՝

ՀՊՄՀ գիտական քարտուղար, դոցենտ

Մարիամ Իսպիրյան

04.09.2020թ.

ք.Երևան